ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 78

«08» 11 202/ թ. ք. Երևան

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱԼԻՐ ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում աշխատանքի և գործավարության կազմակերպման շուրջ ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված առաջարկը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում 2020 թվականի և 2021 թվականի 10 ամիսների ընթացքում դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման հարցադրումներով համալիր ստուգում կատարելու նպատակով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգի 39-րդ կետը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում իրականացնել 2020 թվականի և 2021 թվականի 10 ամիսների ընթացքում դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման հարցադրումներով համալիր ստուգում՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Ստուգումն իրականացնելու համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով՝

Հանձնախմբի ղեկավար՝

Արմեն Մարուխյան – ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ

Հանձնախմբի անդամներ՝

Աբգար Առաքելյան –	ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ
Կարեն Ամիրյան -	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ
Մարատ Հակոբյան -	ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ
Արամ Մաթևոսյան -	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ
Գրիգոր Ամիրյան -	ՀՀ գլխավոր դատախազության Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ
Գագիկ Աղասյան -	ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ
Վահան Սարգսյան -	ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ
Նարեկ Մովսիսյան -	ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազ
Կարապետ Հակոբյան -	ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ:

3. **Հանձնախմբի անդամներին՝** ստուգումն իրականացնել մինչև 2021թ. դեկտեմբերի 1-ը և արդյունքներով կազմված տեղեկանքը ներկայացնել հանձնախմբի ղեկավարին:

4. **Հանձնախմբի ղեկավարին՝** մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը ստուգման արդյունքներով կազմել ամփոփ տեղեկանք և ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

5. Սույն հրամանի պատճենը տրամադրել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազին:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազը:

Ա.Դավթյան